https://doi.org/10.46991/S&L/2022.93.113

ՔՐԵԱՀԻՐԱՎԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ՀՀ ՆՈՐ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ

Տաթևիկ Գևորգյան
ԱրՊՀ իրավունքի ամբիոնի ավագ դասախոս,
իրավաբանական գիտությունների թեկնածու

Իրավակիրառ պրակտիկայի բարդագույն խնդիրներից է քրեահիրավական նորմերի մրցակցության հաղթահարումը: Դրա անհրաժեշտությունն առաջանում է, երբ քրեահիրավական պաշտպանության ենթակա հարաբերությունը միաժամանակ ընկնում է երկու կամ ավելի նորմերի գործողության տիրույթ, որոնցից, սակայն, միայն մեկին է նախապատվություն տրվում այդ հարաբերությունը կարգավորելու համար:

Քրեահիրավական նորմերի մրցակցություն կարող է առաջանալ քրեահիրավական հարաբերությունների տարբեր փուլերում. անձի քրեական պատասխանատվության հիմքը որոշելիս (հանցագործությունները որակելիս), քրեական պատասխանատվությունից ազատելիս, պատիժ նշանակելիս կամ պատժից ազատելիս և այլն:

Դատաքննչական պրակտիկայում հաճախ են պատահում այնպիսի դեպքեր, երբ կատարվում է մեկ արարք, որը միաժամանակ պարունակում է քրեական օրենսգրքի հատուկ մասի երկու կամ ավելի հոդվածներով նախատեսված հանցագործության հատկանիշներ: Տվյալ դեպքում իրավակիրառողն առնչվում է քրեահիրավական երկու ինստիտուտների հետ՝ հանցագործությունների համակցություն և քրեահիրավական նորմերի մրցակցություն: Նման պարագայում առաջանում են արարքի որակման համար էական նշանակություն ունեցող որոշ հարցեր՝ 1. առկա՞ է հանցանքների համակցություն, թե՞ քրեահիրավական նորմերի մրցակցություն, 2. եթե առկա է հանցանքների համակցություն, ապա հանցանքների համակցության ո՞ր տեսակն է դա, իսկ եթե առկա է քրեահիրավական նորմերի մրցակցություն, ապա ինչպիսի՞ն են նորմերի մրցակցության այդ տեսակի պայմաններում արարքի որակման առանձնահատկությունները[1]:

Մրցակցող նորմերը միմյանց հետ փոխադարձաբար սերտորեն կապված են, դա հնարավոր է հանցագործությունը որակելու պահին վերացվի այդ նորմերից մեկը, և կատարվածը վերավորակվի մյուս նորմով:

Ընդունված կարծիք է, որ մրցակցություն կարող է առաջանալ քր. օր.-ի ընդհանուր և հատուկ մասերի նորմերի միջև: Բայց և այնպես հարկ է նշել, որ մրցակցություն առաջանում է ոչ միայն այդ երկուսի միջև, այլև հատուկ մասի տարբեր նորմերի: Նախ և առաջ պետք է տարբերել հանցագործությունների համակցությունը ընդհանուր և հատուկ նորմերի մրցակցությունից: Ընդհանուր նորմն ավելի լայն հասկացություն է և ընդգրկում է հանցանքի տվյալ տեսակի բազում դեպքեր, իսկ հատուկ նորմը պարունակում է նման դեպքերից միայն մեկը:

[1] Տե՛ս **Մելիքսեթյան Ա. Ս.** «Հանցագործությունների բազմակիություն. հասկացությունը, տեսակները, օրենսդրական կարգավորումը և դրա կատարելագործման ուղիները» Ատենախոսություն իրավ. գիտ. թեկնածուի աստիճանի հայցման համար: Երևան, 2010, էջ 58:

Քրեաիրավական նորմերի մրցակցության դեպքում հանցագործությունների որակման հարցերը դիտարկելիս հարկ է նկատել, որ մրցակցող նորմերը հարաբերակցվում են ինչպես ամբողջը և դրա մասը կամ ինչպես ընդհանուրն ու մասնավորը: Դրանով պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջանում հաղթահարելու մրցակցությունը և ընտրելու քրեաիրավական այն նորմը, որն ավելի կոնկրետ և ամբողջական է արտացոլում կատարված հանցավոր արարքի իրավական կողմն ու սոցիալական նշանակությունը[1]:

Հարկ է ընդգծել, որ քրեաիրավական նորմերի մրցակցությունը ոչ թե վերացական հասկացություն է, այլ կոնկրետ իրավակիրառ իրավիճակ: Ինչպես արդարացիորեն նշվում է իրավաբանական գրականության մեջ, «Քրեաիրավական նորմերի մրցակցության դեպքում չպետք է կատարվի վերացական հարցադրում այն մասին, թե մրցակցող նորմերից ո՞րն է միշտ ենթակա կիրառման: Հարցադրումը պետք է ձևակերպվի այլ կերպ. ո՞ր նորմին է համապատասխանում հանցագործությունը, և տվյալ կոնկրետ դեպքում՝ ո՞ր նորմն է ենթակա կիրառման»[2]: Այլ խոսքով՝ «Քրեաիրավական նորմերի միջև մրցակցությունը չի առաջանում կոնկրետ իրավիճակից և գործի փաստական հանգամանքներից կտրված»[3]:

Որոշ երկրների քրեական օրենսգրքերում սահմանված են արարքի որակման որոշ կանոններ, երբ հանցագործությունը նախատեսված է ընդհանուր և հատուկ նորմերում: Օրինակ, Ուզբեկստանի Հանրապետության և Ղազախստանի Հանրապետության քրեական օրենսգրքերում սահմանված են համանման դրույթներ, համաձայն որոնց՝ հանցագործությունների համակցություն է համարվում քր.օր.-ի հատուկ մասի տարբեր հոդվածներով կամ հոդվածի տարբեր մասերով նախատեսված երկու կամ ավելի հանցագործությունների կատարումը, որոնցից ոչ մեկի համար անձը չի դատապարտվել, որի համար նա ենթակա է պատասխանատվության: Եթե անձի կողմից կատարված արարքը պարունակում է մեկ հոդվածի տարբեր մասերով նախատեսված հանցակազմի հատկանիշներ, ապա պատասխանատվություն է առաջանում հոդվածի այն մասով, որը նախատեսում է ավելի խիստ պատիժ: Հանցագործությունների համակցության դեպքում անձը պատասխանատվություն է կրում կատարված յուրաքանչյուր հանցագործության համար:

Բելառուսի Հանրապետության 1999 թ. ընդունված քրեական օրենսգրքի 42-րդ հոդվածի համաձայն՝ հանցագործությունների համակցություն է համարվում քր.օր.-ի հատուկ մասի տարբեր հոդվածներով նախատեսված երկու կամ ավելի հանցագործությունների կատարումը, որոնցից ոչ մեկի համար անձը չի դատապարտվել: Այդ դեպքում անձը պատասխանատվություն է կրում կատարված յուրաքանչյուր արարքի համար: Եթե հանցագործությունը նախատեսված է քր.օր.-ի հատուկ մասի տարբեր հոդվածներում, որոնցից մեկը համարվում է ընդհանուր, իսկ մյուսը՝ հատուկ, հանցագործությունների համակցությունը բացակայում է, և պատիժ է սահմանվում հատուկ նորմով[4]:

---

[1] Քրեաիրավական նորմերի մրցակցության դեպքում անձի արարքը մրցակցող նորմերի համակցությամբ որակելն անթույլատրելի է: Սա խախտում է կրկնակի մեղսայնացման արգելքի սկզբունքը, ինչն էլ իր հերթին կարող է հանգեցնել non bis in idem (կրկնակի դատապարտման անթույլատրելիության) սկզբունքի խախտման:

[2] Տե՛ս **Кудрявцев В.Н.** Общая теория квалификации преступлений, էջ 215:

[3] Տե՛ս **Шакин В.Б.** Конкуренция и коллизия уголовно-правовых норм // Сибирский юридический вестник, 2001, № 1, էջեր 68-71:

[4] Տե՛ս Уголовный кодекс Республики Беларусь. Минск. 1999.

Մի շարք քրեագետներ կարծում են, որ առանձին հստակեցում է պահանջվում մեկ և մի քանի հանցագործությունների դեպքում կիրառվելիք նորմերի ընտրության հարցում: Օրինակ, Կուդրյավցևը դրա տակ հասկանում է հանցագործություն, որը միաժամանակ պարունակում է քրեաիրավական երկու կամ ավելի նորմի հատկանիշներ[1]: Իսկ քրեագետ Գերցենզոնի կարծիքով՝ մրցակցություն կարող է առաջանալ այն դեպքում, երբ համապատասխան արարքի համար, որի հատկանիշները նախատեսված են տարբեր նորմերով, սահմանվում են տարբեր պատժատեսակներ[2]: Կուրինովի կարծիքով՝ նորմերի մրցակցություն կարող է առաջանալ այն դեպքում, երբ մեկ հանցագործության որևէ հատկանիշ առկա է քր. օր-ի հատուկ մասի տարբեր նորմերում[3]:

Ինչպես երևում է վերոգրյալից, քրեագետների մեծ մասի կարծիքով՝ քրեաիրավական նորմերի մրցակցության պատճառ կարող է հանդիսանալ տարբեր նորմերում միևնույն արարքի հատկանիշների առկայության փաստը:

Պետք է նշել նաև, որ հանցագործությունների որակման ժամանակ հատուկ նորմին նախապատվություն տալիս չպետք է որպես հիմք ընդունվի այն, որ քրեական օրենսգրքի հատուկ մասի տվյալ հոդվածի սանկցիան ավելի խիստ է, քան ընդհանուր հանցատեսակի համար պատասխանատվություն նախատեսողինը, որովհետև միշտ չէ, որ հատուկ նորմի սանկցիան ավելի խիստ է լինում, քան ընդհանուրինը. միշտ չէ, որ հատուկ նորմն առավել խիստ պատիժ է նախատեսում, քան ընդհանուրը:

Հատուկ նորմերի մրցակցությունը կարող է առաջանալ այն դեպքերում, երբ հանցագործությունը միաժամանակ համապատասխանում է երկու կամ ավելի՝ իրար չստորակարգված քրեաիրավական նորմերով նախատեսված հանցակազմերի հատկանիշներին, որոնցից յուրաքանչյուրը հանդես է գալիս որպես հատուկ՝ մեկ ընդհանուր նորմի համեմատ:

Քրեաիրավական նորմերի մրցակցության այս տեսակը ունի հետևյալ դրսևորումները.

– *Որակյալ (ծանրացնող) և արտոնյալ (մեղմացնող) նորմերի մրցակցություն:* Քրեաիրավական նորմերի մրցակցության այս ձևի դեպքում արարքը միաժամանակ պարունակում է տվյալ հանցակազմի ինչպես որակյալ, այնպես էլ արտոնյալ հանգամանքներ: Այս դեպքում մեղմացնող հանգամանքով նորմն առավելություն ունի նույն արարքի ծանրացնող հանգամանքով նորմի նկատմամբ: Այլ խոսքով՝ տվյալ դեպքում *նախապատվությունը տրվում է արտոնյալ նորմին, և անձի արարքը որակվում է միայն այդ նորմով:*

Ներկայումս համընդհանուր ճանաչում է գտել այն կանոնը, համաձայն որի՝ որակյալ (ծանրացնող) և արտոնյալ (մեղմացնող) նորմերի մրցակցության դեպքում հանցագործությունները որակելիս նախապատվությունը պետք է տրվի արտոնյալ նորմին: Արտոնյալ նորմի ընտրության հիմքում ընկած է այն գաղափարը, որ տվյալ իրավիճակում մի շարք պատճառներով տեղի է ունենում կատարվածի հանրային վտանգավորության աստիճանի կտրուկ նվազում: Ար-

[1] Տե՛ս **Кудрявцев В.Н.** Общая теория квалификации преступлений, էջ 210; նույն հեղինակի՝ Теоретические основы квалификации преступлений. М., 1963. էջ 243:
[2] Տե՛ս **Герцензон А.А**. Квалификация преступлений. М., 1947, էջ 21:
[3] Տե՛ս **Куринов Б.А.** Научные основы квалификации преступлений. М., 1976, էջ 174:

տոնյալ նորմը մեղմացնում է որակյալ նորմով սահմանված խիստ պատժվող արարքը[1]:

Մրցակցության այս տեսակը ամենից շատ հանդիպում է սպանությունների որակման գործընթացում: Այսպես, օրինակ՝ հոգեկան խիստ հուզմունքի վիճակում առանձին դաժանությամբ կատարված սպանությունը պետք է որակվի միայն որպես հոգեկան խիստ հուզմունքի վիճակում կատարված սպանություն:

– *Որակյալ և առավել որակյալ նորմերի մրցակցություն:* Քրեաիրավական նորմերի մրցակցության այս ձևն առկա է այն դեպքում, երբ անձի արարքում միաժամանակ կան որակյալ (ծանրացնող) և առավել որակյալ (առավել ծանրացնող) հանգամանքներ*: Այս դեպքերում արարքը որակվում է առավել որակյալ նորմով*:

Հատուկ մասում նախատեսված քրեաիրավական նորմերի մրցակցության ինստիտուտն անմիջականորեն առնչվում է հանցագործությունների բազմակիությանը:

Հատուկ մասի նորմերի մրցակցությունն առկա է այն ժամանակ, երբ կատարված մեկ արարքը համապատասխանում է հատուկ մասի երկու հոդվածներով նախատեսված հանցագործությունների հատկանիշներին, սակայն օրենքն այդ արարքի համար առանձնացնում է հատուկ նորմ՝ հաշվի առնելով հանցակազմի այս կամ այն հատկանիշի առանձնահատկությունը: Հատուկ մասի նորմերի մրցակցության դեպքում կատարված արարքը պետք է որակել մեկ հոդվածով կամ հոդվածի մասով, ընդ որում՝ այն հոդվածով, որն առավել ամբողջական է արտացոլում կատարված հանցանքի բոլոր հատկանիշները[2]: Հանցագործությունների բազմակիությունը բացակայում է ՀՀ քր. օր.-ի հատուկ մասով նախատեսված քրեաիրավական նորմերի մրցակցության դեպքում:

Ընդհանրապես, մրցակցության տեսակները բազմաբնույթ են: Բացի վերոնշվածներից, մրցակցություն կարող է առաջանալ նաև միևնույն արարքում ծանրացնող և առավել ծանրացնող հանգամանքներ սահմանող հոդվածի մասերի միջև: Տվյալ դեպքում արարքը պետք է որակել հոդվածի միայն առավել ծանրացնող հանգամանքները նախատեսող մասով: Նույն մոտեցումը կիռարվում է նաև այն դեպքում, երբ առկա է մրցակցություն միևնույն արարքում հանցակազմի մեղմացնող և առավել մեղմացնող հանգամանքները նախատեսող հոդվածի մասերում:

Քրեական նոր օրենսգրքի (հոդված 52) համաձայն՝ «Եթե անձի մեկ արարքում միաժամանակ առկա են սույն օրենսգրքի հատուկ մասի ընդհանուր և հատուկ նորմեր, ապա արարքը որակվում է միայն հատուկ նորմով»: Դա պայմանավորված է նրանով, որ հատուկ նորմը միշտ հանդիսանում է ընդհանուր նորմի առավել կոնկրետացված դրսևորումը:

Քննարկվող հոդվածի վեցերորդ մասը սահմանում է. «Եթե հանցակազմի բաղկացուցիչ մաս է այլ հանցանքի կատարումը, ապա դրա համար անձն առանձին ենթարկվում է քրեական պատասխանատվության միայն այն դեպքում, երբ այդ հանցագործության համար սույն օրենսգրքով հավասար կամ ավելի

---

[1] Տե՛ս **Костарева Т.А.** Квалифицирующие обстоятельства в уголовном праве (понятие, законодательная регламентация, влияние на дифференциацию ответственности). Ярославль: Изд-во Ярославск. ун-та, 1993, էջ 149:

[2] Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս (վեցերորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով)./Ս. Առաքելյան, Ա. Գաբուզյան, Հ. Խաչիկյան և ուրիշ. – Եր.: ԵՊՀ հրատ., 2012, էջ 307:

խիստ պատիժ է նախատեսված, քան այն հանցակազմի համար, որի բաղկացուցիչ մասն է տվյալ հանցանքը»:

Այս իրավակարգավորումն առանցքային նշանակություն ունի հանցագործությունների որակման գործընթացն արդյունավետ կազմակերպելու համատեքստում: Առանց խորքային տեսական վերլուծություններ կատարելու՝ նշենք, որ այս դրույթի կենսագործման պարագայում՝ հանցանքի բաղկացուցիչ մաս կազմող առանձին հանցանքն ինքնուրույն կորակվի միայն այն դեպքում, երբ դրա համար հավասար կամ ավելի խիստ պատիժ է նախատեսված[1]:

Ամփոփելով կարող ենք ընդգծել, որ հատուկ մասով նախատեսված քրեաիրավական նորմերի մրցակցության օրենսդրական կարգավորումը առանցքային նշանակություն կարող է ունենալ և կունենա ինչպես տեսական, այնպես էլ պրակտիկ գործունեության համար:

КОНКУРЕНЦИЯ УГОЛОВНО-ПРАВОВЫХ НОРМ ПО НОВОМУ УГОЛОВНОМУ КОДЕКСУ РА

Татевик Геворгян
Старший преподаватель кафедры права АрГУ,
кандидат юридических наук

Совершение одним лицом нескольких преступлений требует от государства особого к себе отношения. Необходимость противодействия таким преступным проявлениям обусловливает научную и практическую разработку конкуренции уголовно-правовых норм. Конкуренция уголовно-правовых норм может иметь место на разных стадиях уголовно-правовых отношений, и только их правильная оценка может обеспечить точную квалификацию и раскрытие преступного деяния или деяний. Новшеством в этом отношении является закрепление этого института и определение этого понятия в новом Уголовном кодексе Республики Армения.

Автор вначале ссылается на содержательное многообразие конкуренции норм, а затем предлагает в их случае соответствующую квалификацию. Автор высоко оценивает законодательные положения о конкуренции уголовно-правовых норм, предусмотренные в особенной части нового Уголовного кодекса Республики Армения, отмечая, что эти положения могут способствовать решению возникающих на практике проблем.

[1] Տե՛ս ՀՀ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների և նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույց, 2022թ., էջ 111-114:

COMPETITION OF CRIMINAL LAW NORMS UNDER THE NEW RA CRIMINAL CODE

Tatevik Gevorgyan
Senior Lecturer of the Department of Law at ASU,
Candidate of Legal Sciences

The commission of several crimes by one person requires a special approach by the government. The need to counteract such criminal manifestations determines the scientific and practical development of the competition of criminal law norms. The competition of criminal law norms can take place at the stage of various criminal law relations, and only their legal assessment can have an accurate qualification and disclosure of a criminal act or acts. An innovation in this respect is the consolidation of this institution and the definition of this concept in the new Criminal Code of the Republic of Armenia. The author first refers to the substantive diversity of the competition of norms, and then offers their appropriate qualification. The author greatly appreciates the legislative provisions on the competition of criminal law norms, stipulated in the separate part of the new Criminal Code of the Republic of Armenia, noting that these provisions can contribute to solving problems that arise in practice.

Բանալի բառեր - *հանցագործությունների բազմակիություն, հանցագործություն-ների համակցություն, քրեական օրենսդրություն, նոր քրեական օրենսգիրք, քրեաիրավական նորմերի մրցակցություն*
Ключевые слова: *множественность преступлений, совокупность преступлений, уголовное законодательство, новый Уголовный кодекс, конкуренция уголовно-правовых норм*
Key words: *multiple offences, cumulative offences,criminal legislation, the new Criminal code, competition of criminal law*